4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2013 ՈՒՐԲԱԹ 168(5251)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Իլհամ Ալիեւը հաշտվել է Ղարաբաղի «կորստի» հետ

**Իլհամ Ալիեւը Ադրբեջանի նախագահի՝ հոկտեմբերի 6-ին կայանալիք ընտրություններին մասնակցում է «Պահպանիր քո ներկան. քվեարկիր Իլհամ Ալիեւի օգտին» կարգախոսով: Ընտրությունների ժամանակ թեկնածուների կարգախոսները էական դեր չեն կատարում նրանց հաջողությունների կամ անհաջողությունների գործում, բայց եթե կարեւոր չլինեին, ապա թեկնածուները քարոզարշավին կմասնակցեին առանց կարգախոսների, իսկ կարգախոսները ամեն թեկնածուի համար մշակում են մասնագետներ՝ ելնելով տվյալ հասարակության պահանջներից:**

**Հետեւաբար, Իլհամ Ալիեւի թիմի կարծիքով՝ ադրբեջանցի հասարակությունը կողմնակից է, նրա մեծամասնությունը ձգտում է, ավելի շատ կարիք ունի հենց «ներկան պահպանելու»: Դիցուք, Ադրբեջանի տնտեսությունը երկնիշ թվերով առաջ է գնում, նավթարդյունաբերությունը աննախադեպ աճ է գրանցում, Ադրբեջանի բյուջե, ադրբեջանական արդյունաբերության վրա հիմնված տնտեսությունից մեծ գումարներ են մտնում ամեն տարի: Ընդունենք, որ ադրբեջանական բանակը տարեցտարի համալրվում է գերժամանակակից զինամթերքով, այդ երկրի զինված ուժերն այսօր պատրաստ են «մի քանի րոպեում» ոչ միայն «հետ բերել» Լեռնային Ղարաբաղը, այլեւ միաժամանակ ծնկի բերել Իրանին՝ «վերականգնելով Մեծ Ադրբեջանը»: Մի պահ ընդունենք, որ հարեւան երկրի բանակում մահվան ելքով բռնությունները մասսայական բնույթ չեն կրում, այդ երկրի զինվորների բարոյահոգեբանական պատրաստվածությունն աննախադեպ բարձրացել է, ադրբեջանական հասարակության ներսում իսպառ վերացել է սոցիալական անդունդը, այդ երկիրն այլեւս թմրամիջոցների տարանցիկ գոտի չէ եւ թմրամիջոցների օգտագործման իր չափանիշով ամենեւին էլ առաջատարը չէ տարածաշրջանում... Հետեւաբար, մի պահ ընդունենք, որ հարեւան երկրի ներկան նախանձելիորեն լավ է, ու Ադրբեջանն իր տարածքին ու ներքին քաղաքական հաղթանակների շարքով պատմության մեջ է արդեն մտել որպես ոչ թե «կրակների երկիր», այլ՝ «կրակի կտոր»: Բայց, այսքանով հանդերձ անգամ, Ադրբեջանի ներկան Ադրբեջանն է՝ առանց Ղարաբաղի, որը երբեք նրանը չի պատկանել: Հետեւաբար Իլհամ Ալիեւը, «Պահպանիր քո ներկան. քվեարկիր Իլհամ Ալիեւի օգտին» կարգախոսով ցանկանում է ցույց տալ, որ ինքն ու ադրբեջանցի հասարակության մեծամասնությունը (որը հոկտեմբերի 6-ին անկասկած ընտրելու է Իլհամ Ալիեւին երրորդ անգամ անընդմեջ Ադրբեջանի նախագահի պաշտոնում) հաշտվել են իրենց՝ առանց Ղարաբաղի ներկայի հետ, ավելին, ցանկանում են պահպանել այդ ներկան:**

**Ի դեպ, հիշեցնենք, որ նախօրեին ԵԽԽՎ-ում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, պատասխանելով ադրբեջանական պատվիրակության ղեկավար Սամեդ Սեիդովի հարցին (որն ուղղակի անիմաստ է վերաշարադրելը), ասել էր, որ պատերազմը վերսկսելու պարագայում Ադրբեջանը կբողոքի այս անգամ արդեն «սեփական տարածքների» 30 կամ 40 տոկոսի կորստի կապակցությամբ:**

**Ուրեմն հասկացել են, որ եթե պատերազմը այս հիմնահարցի լուծում է, ուրեմն մենք արդեն լուծել ենք: Հասկացել են ու ցանկանում են պահպանել ներկա՛ն:**

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Փոստանջյանի վրա չկենտրոնանալ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Երկու օր է՝ մերձքաղաքական եւ մերձլրագրողական շրջանակները զբաղված են Զարուհի Փոստանջյանով՝ ԵԽԽՎ-ում Հայաստանի նախագահին ուղղված նրա հարցի համար (այդ մասին «**Ազգը**» գրել է): Ազգիս իշխանամետ հատվածը նրա փետուրներն է քամուն տալիս՝ ամենաթունդ որակումներով եւ հարցադրմամբ, թե ինչպե՞ս կարելի էր մեր չուզողների մոտ վարկաբեկել երկրի խորհրդանիշ նախագահին, այդպիսով՝ նաեւ երկիրը: Որակումների մեջ անգամ թուրք եւ դավաճան բառերն են հնչել: Այս տեսակետի ընդդիմախոսներն, ընդհակառակը, ճիշտ էին համարում ԵԽԽՎ ամբիոնն օգտագործելը ընդդիմադիր պատգամավորուհու կողմից, քանի որ առերես ուրիշ ոչ մի տեղ այդ հարցը նա չի կարողացել տալ նախագահին: Ընդդիմադիրներից շատերը չեն պաշտպանում Փոստանջյանի քայլը՝ նկատի առնելով, որ կարելի էր ավելի զուսպ ու բացառապես քաղաքական հարց ուղղել Սերժ Սարգսյանին՝ էլի երկրի իմիջը նկատի ունենալով, բայց իշխանամետների որակումները չկիսելով եւ ավելի զուսպ կեցվածքով: Համատարած դատափետումը՝ ընդհուպ բռնության կոչեր էքսցենտրիկ պատգամավորուհու նկատմամբ չկիսելով, նշենք սակայն, որ զուտ քաղաքական հարցը կարող էր զարդարել տվյալ պատգամավորուհուն ու նրա դավանած ուժին:

Մինչդեռ համաձայնեցված թե ինքնագլուխ՝ նրա հարցը երկրի հետ մեկտեղ իր դավանած ուժին էլ է կպել: Անգամ Փոստանջյանի խմբակցության ղեկավար Ռուբեն Հակոբյանն է նշել, թե ինքն այդպիսի հարց չէր տա ԵԽԽՎ ամբիոնից՝ նա չէր ցանկանա այդպիսով առիթ տալ Եվրոպային մեր երկրի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու, եւ նաեւ այն պատճառով, որ քաղաքական տարր չկար հարցի մեջ, մինչդեռ մենք բազմաթիվ խնդիրներ ունենք բարձրացնելու հենց ԵԽԽՎ ամբիոնից:

*Տես էջ 2*

# Զինանշանը շտկումների կարիք ունի



ՖՈՏՈԼՈՒՐ

**Նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանն ասում է, որ հայկական զինանշանն աղավաղված է եւ փոփոխությունների կարիք ունի:**

**Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ պարոն Աղամյանն անդրադարձավ զինանշանի թերություններին: Ըստ նրա՝ ներկայումս զինանշանի տեսքը 1918 թվականին նկարված զինանշանից խիստ տարբեր է: Հայաստանի երրորդ հանրապետության զինանշանի առյուծը ճաղատ է, ինչը նշանակում է, որ ծեր է: Սովորաբար զինանշանների վրա պատկերված կենդանիների երախը բաց է լինում, ինչը նշանակում է, որ հսկում են պետության սահմանները, սակայն մեր զինանշանում պատկերված առյուծի երախը բաց չէ: Բացի դրանից՝ զինանշանի վրա պատկերված թուրը պետք է պատռեր շղթան, սակայն հայկական զինանշանի դեպքում հակառակն է՝ շղթան փաթաթվել է թրին, եւ անգամ թրի ծայրը սուր չէ:**

**Կարեն Աղամյանը հավելեց, որ մեր զինանշանի մեջ թաքնված են թշնամական նշաններ, եւ կարծես թե մեկը դիտավորյալ աղավաղել է:**

**Պարոն Աղամյանն ակնկալում է, որ զինանշանի վրա շտկումներ կարվեն, մանավանդ որ հարցը քննարկվել է նաեւ Հանրային խորհրդում:**

Ի. Պ.

# Լիբիայի վարչապետն այցելեց հարձակման ենթարկված ՌԴ դեսպանատուն

Հոկտեմբերի 3-ին Տրիպոլիում ՌԴ դեսպանատուն են այցելել Լիբիայի վարչապետ Ալի Զեյդան Մուհամմեդը եւ արտգործնախարար Մուհամմեդ Աբդելազիզը: Կառավարության ղեկավարը շնորհակալություն է հայտնել հոկտեմբերի լույս 3-ի գիշերը շենքը հարձակումից պաշտպանած կարգի պահապաններին եւ քաղաքացիական անձանց:

Չորեքշաբթի ուշ երեկոյան ՌԴ դեսպանատան մոտ որոտացել էին պայթյուններ, սկսվել էր հրաձգություն: Դրանից հետո մեկ տասնյակ գրոհայիններ փորձել էին թափանցել դիվանագիտական ներկայացուցչության տարածք: Իրավապահների դիմադրությանը հանդիպելով՝ ելուզակները փախել էին անհայտ ուղղությամբ: Հարձակվողներից մեկը սպանվել էր: Դիվանագետներից եւ տեղացի պահապաններից ոչ մեկը չէր տուժել: Դեսպանատան շենքին աննշան վնաս է հասցված: Ներկայումս Լիբիայի ուժային մարմինները զբաղվում են ելուզակների որոնումներով:

Պ. Ք.

# Ռուսական վարկն ամբողջությամբ կմարվի եվրոպարտատոմսերից ստացած գումարով

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

700 մլն դոլար ծավալով պետական պարտատոմսերի՝ սեպտեմբերի 19-ին իրականացված առաջին տեղաբաշխումից Հայաստանի Հանրապետությունն արդեն ստացել է 690 մլն դոլար: Այդ գումարը կուղղվի ռուսական 500 մլն դոլարի վարկի վաղաժամկետ մարմանը: Մնացած մասից շուրջ 60 մլրդ դրամը կուղղվի գերմանա-հայկական հիմնադրամին՝ փոքր եւ միջին բիզնեսի ֆինանսավորման համար, 3,9 մլրդ դրամը՝ ՓՄՁ ունիվերսալ վարկային կազմակերպությանը, դարձյալ փոքր բիզնեսի վարկավորման համար, 1,9 մլրդ դրամը՝ արտահանման հիմնադրամին, մնացածը՝ պետական պարտքի կառավարմանը, որից ներքին շուկայի համար թողարկած պետական պարտատոմսերի տոկոսները որոշակիորեն կնվազեն: Այս մասին երեկ կառավարության նիստի ժամանակ, ապա նաեւ մամուլի ասուլիսում հայտարարեց ֆինանսների նախարար **Դավիթ Սարգսյանը**:

Վարչապետ **Տիգրան Սարգսյանը** հարցի առնչությամբ կարեւորեց պարզաբանումներ ներկայացնելը, ասելով, որ «մեր որոշ ընդդիմախոսներ փորձում են այս գործընթացին կասկածով վերաբերվել եւ սեւացնել այն»: Նա տեղեկացրեց, որ Հայաստանի կառավարությունը վարձել է աշխարհի լավագույն իրավաբանական կազմակերպություններից մեկին՝ այս գործընթացը միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան իրականացնելու համար: Տեղաբաշխումն իրականացրել են դարձյալ աշխարհում հայտնի երեք ընկերություններ՝ Deutsche Bank-ը, GP Morgan-ը, HSBC բանկը: Տեղաբաշխումն իրականացվել է շուկայում ստեղծված իրավիճակի լավագույն պահին եւ այդ պահի դրությամբ ամենացածր տոկոսադրույքներով: Ըստ վարչապետի՝ տեղաբաշխման շնորհիվ «մենք կարողանում ենք 7 տարվա կտրվածքով բարելավել մեր վճարային հաշվեկշիռը, կանխիկ հոսքերը, ինչպես նաեւ 2013-2014 թվականների բյուջեի կատարողականի առումով ստանալ դրական իրավիճակ, քանի որ, ինչպես զեկուցեց ֆինանսների նախարարը, մենք կունենանք տնտեսում, ինչպես նաեւ մեր գործողությունները նպաստելու են տոկոսադրույքների նվազեցմանը»:

*Տես էջ 3*

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ՇՈՒՐՋԸ

# Փոստանջյանի վրա ...

*1-ին էջից*

Փոստանջյանի դիրքորոշումը նրա կուսակցության դիրքորոշումն են համարում և՛ ավագ հանրապետականներ **Գալուստ Սահակյանը, Սամվել Նիկոյանը**, և՛ նրանց երիտասարդ գործընկերները, նշելով, թե պատասխանատվությունն էլ պետք է կրեն նրա կուսակիցները: Ուրիշները խորհուրդ էին տալիս սպասել ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակությահն վերադարձին՝ քայլեր ձեռնարկելուց եւ որակումներից առաջ: Սակայն Ազգային ժողովի նախագահ **Հովիկ Աբրահամյանն** այլ կարծիքի էր, երեւում է, քանի որ առանց սպասելու պատվիրակության վերադարձին՝ նա հայտարարեց Զարուհի Փոստանջյանին ԵԽԽՎ պատվիրակության կազմում փոխարինելու որոշման մասին: Ըստ մամուլի՝ Զարուհին ձայնի իրավունք է ստացել, քանի որ նրան զիջել է ՀՀԿ-ական Արփինե Հովհաննիսյանը, նրան էլ դա հրահանգել է պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանը: Սամվել Նիկոյանը նկատում էր, որ նման պատասխանատու օր կարելի էր թույլ չտալ Զարուհուն հարց ուղղել: Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ հատկապես ընդդիմադիրների հարց ուղղելու երեւույթն է ընկալելի ԵԽԽՎ-ում, այնպես որ Հայաստանն այդ մոտեցումը ոչ կարող էր անտեսել, ոչ էլ արգելել: Ուրիշ բան, եթե տեղյակ լինեին հարցի բովանդակությունից եւ փորձեին ընկերական զրույցներով կանխել:

Բոլոր դեպքերում՝ ԱԺ նախագահը երեկվա նիստի հենց առաջին պահին հայտարարեց, թե հաշվի առնելով ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանի վարքագիծը ԵԽԽՎ նիստի ընթացքում եւ Ազգային ժողովի կանոնակարգ-օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «է» ենթակետի իր լիազորություններից օգտվելով եւ խորհրդակցելով Ազգային ժողովի խմբակցությունների հետ՝ մտադիր է փոփոխություն կատարել ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության կազմում: Նա նաեւ իր այդ հայտարարությունը համեմեց մեկնաբանությամբ. «Քաղաքական կարծիքը ազատ արտահայտելու իրավունքի երաշխավորումը ժողովրդավարության անկյունաքարերից մեկն է: Այն անհրաժեշտ պայման է ժողովրդավարական հասարակությունում պատշաճ քաղաքական բանավեճ ծավալելու համար: Այդուհանդերձ, քաղաքական կարծիքի արտահայտումը իր բնույթով բացարձակ իրավունք չէ:

ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածը նախատեսում է, որ պատգամավորի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը սահմանափակված է վիրավորանքի կամ զրպարտության անթույլատրելիությամբ: Այսինքն՝ այդ իրավունքը սահմանափակված է, երբ դրա կիրառումը շեղվում է իր իրական նպատակից՝ ազատ քաղաքական բանավեճ ծավալելուց:

Նաեւ ԵԽԽՎ կանոնակարգի 21.6 հոդվածն է պարունակում մարդկային արժանապատվությունը ոտնահարող արտահայտությունների օգտագործման արգելք»:

Փաստորեն՝ Զ. Փոստանջյանի հարցը վիրավորանքի եւ զրպարտության առումով դիտարկելով, այո, այդպիսի որոշում կարող է ընդունվել, մանավանդ եթե նկատի ունենանք արդեն երկու օր Ազգային ժողովում եռացող կրքերն այս ուղղությամբ, հանրապետական երեւելի գործիչների թունդ մեղադրական հայտարարությունները:

Սակայն ռոտացիային չսպասելու եւ հարց տալու համար ԵԽԽՎ անդամին փոխարինելու սկանդալը կարող է նույնքան միջազգային ուշադրություն բեւեռել իր վրա, որքան Փոստանջյանի սկանդալային հարցն՝ ուղղված Հայաստանի նախագահին, սրան պատրա՞ստ են մեր իշխանությունները: Օրինակ՝ ազատդեմոկրատական **Ալիկ Արզումանյանն** ասում էր, թե դիվանագիտորեն սխալ է այդ ձեւով պատվիրակության անդամի փոխարինելը: Ինքը, Զարուհի Փոստանջյանը պատրաստ է պայքարել իր մանդատի համար՝ խոստանալով Հովիկ Աբրահամյանի հետ իրավական լեզվով խոսել:

Ընդ որում՝ Փոստանջյանի սկանդալային հարցը, որքան էլ տարօրինակ հնչի, մի քիչ օգնեց հայերիս՝ տեղեկատվական առումով. երեւի հազարավոր եվրոպացիք կամ այլազգիներ, ովքեր հետեւել էին ԵԽԽՎ նստաշրջանին, սկանդալային հարցի մասին կարդալով՝ համացանցում բացած կլինեն նախագահ Սարգսյանի ելույթը, որը չիմացողներին շատ լավ մատնացույց է անում եւ Հայաստանը շրջափակող հարեւանին, եւ եվրոպական Ղարաբաղը, եւ մեր նպատակները:

Իսկ ահա Հայաստանում Փոստանջյանի սկանդալի վրա սեւեռվելով՝ մի տեսակ լավ չեն նկատում Հայաստանի նախագահի ելույթի մի շարք նորությունները, որոնց վերաբերյալ կարելի է հետեւությունների հանգել:

Եթե շրջանցենք այդ ելույթի ավանդական թեմաները, ապա Մաքսային միությանն անդամակցելուց հետո եվրոպական արժեքներով պետական համակարգ ունենալու հաստատակամության եւ ԵՄ-ի՝ Հայաստանի կարեւոր գործընկեր լինելը վերահաստատելը՝ Վիլնյուսի գագաթնաժողովից առաջ մի շարք ենթադրությունների տեղիք է տալիս: Ենթատեքստ ուներ նաեւ, թե միշտ Հայաստանը հայտարարել է Արեւելյան գործընկերության պետությունների քաղաքակրթական ընտրության հարթության մեջ դիտարկելուն պատրաստ չլինելու մասին, բայց եւ՝ նպատակաուղղված շարունակելու է փոխշահավետ գործակցությունը ու չի ընդհատելու ԵՄ-ի հետ ընդլայնված հարաբերություններ ունենալու քաղաքականությունը: Ապա եւ՝ հավաստիացրել էր, որ Հայաստանը չի կառուցել նոր հարաբերություններ ի հաշիվ ռազմավարական դաշնակից Ռուսաստանի, մի խոսքով՝ առանցքային գործընկերների հետ հարաբերությունների եւ շահերի համադրումն էր եւ է Հայաստանի մոտեցումը, կամ, եթե հիշեցնենք, ավելի վաղի «եւ-եւ-ը»: Եվ որ՝ Ղարաբաղը եղել է ու կմնա Եվրոպայի մաս, ԵԽ-ն էլ պետք է ուղղակի շփումներ նախաձեռնի Ղարաբաղի հետ, հակամարտությունների գոտիների համանման փորձը գործածելով: Իսկ դուք կենտրոնացել եք Զարուհու սկանդալային հարցի վրա:

# Երեւանի կոնյակի գործարանը երկարացնում է խաղողի մթերման ժամկետը

Երեւանի կոնյակի գործարանը ավարտում է այս տարվա խաղողի մթերման աշխատանքները Արարատյան դաշտավայրում: Հոկտեմբերի 3-ի ժամը 14-ի դրությամբ Երեւանի կոնյակի գործարանը մթերել է 33 298 տ խաղող:

Ընկերությունը Արարատի եւ Արմավիրի մարզերից արդեն մթերել է նախատեսված ծավալի 100 տոկոսը: Այդուհանդերձ, ընդառաջելով ընկերության հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող գյուղացիներին, ովքեր չեն հասցրել ժամանակին հանձնել իրենց պայմանագրով նախատեսված ծավալը կամ ունեն սահմանված ծավալներից ավել բերք, Երեւանի կոնյակի գործարանը երկարացնում է մասնաճյուղերի աշխատանքը խաղողի ընդունման գծով: Մասնավորապես, ԵԿԳ Արմավիրի (Արմավիրի մարզ) եւ Այգավանի (Արարատի մարզ) մասնաճյուղերը բաց կլինեն խաղողագործների համար մինչեւ հոկտեմբերի 4-ը ներառյալ:




ԵԿԳ Բերդի մասնաճյուղում (Տավուշի մարզ) մթերման աշխատանքները շարունակվում են: Հոկտեմբերի 3-ի ժամը 14:00-ի դրությամբ այստեղ մթերվել է ավելի քան 3 500 տ խաղող: Տավուշի մարզում ընկերությունը նախատեսում է մթերել շուրջ 4 500 տ խաղող: Մասնաճյուղը կշարունակի խաղողի մթերման իր պլանային աշխատանքը մինչեւ հոկտեմբերի 6-ը:

Հավելենք, որ Երեւանի կոնյակի գործարանը խաղողի մթերումը մեկնարկել է սեպտեմբերի 9-ին: Այս տարի ընկերությունը նախատեսել է մթերել 35 000 տ խաղող, ինչը շուրջ 10 000 տ-ով գերազանցում է անցյալ տարի մթերված խաղողի ծավալը: Մթերվող խաղողի 1 կիլոգրամի գինը սահմանվել է 145 ՀՀ դրամ Արմավիրի եւ Այգավանի մասնաճյուղերի համար եւ 135 դրամ Տավուշի տարածաշրջանի համար, անցյալ տարվա համապատասխանաբար 140 եւ 130 ՀՀ դրամի փոխարեն: Խաղողագործներին վճարումները կատարվում են երեք-չորս բանկային օրվա ընթացքում: Այս պահի դրությամբ փոխանցվել են մինչեւ հոկտեմբերի 1-ը մատակարարած բոլոր խաղողագործների գումարները, ինչը կազմում է մոտ 4.5 մլրդ դրամ (4 510 291 090 ՀՀ դրամ):

# Նոր ծրագիր Orange Դելֆինի, Թիթեռի եւ Պանտերայի հավատարիմ բաժանորդների համար




Orange-ն հայտարարեց իր հավատարիմ բաժանորդների համար նախատեսված նոր անակնկալների մասին: Այն բաժանորդները, ովքեր ավարտել են իրենց 12 կամ 24 ամսվա պարտավորությունը, ամեն ամիս Orange Merci հավատարմության միավորների տեսքով կստանան իրենց ամսավճարի 10%-ը: Այս միավորները կարող են օգտագործվել ցանցից դուրս րոպեներ, SMS-ներ եւ մեգաբայթեր ձեռք բերելու համար: Առաջին միավորները բաժանորդներին կտրամադրվեն արդեն նոյեմբերի սկզբին, իսկ այնուհետեւ՝ յուրաքանչյուր ամիս: Ընդ որում, Orange-ի «շնորհակալության» միավորները ստանալու համար ոչինչ անել պետք չէ, պարզապես անհրաժեշտ է շարունակել օգտվել Orange-ի ծառայություններից:

Ավելին, Orange-ի Դելֆին, Թիթեռ կամ Պանտերա այն բաժանորդները, ովքեր ավարտել են իրենց 12 կամ 24 ամսվա պարտավորությունը, կարող են ընտրել եւս մեկ անգամ երկարաձգել պայմանագիրը 12 կամ 24 ամսով: Այս դեպքում վերջիններս Orange Merci հավատարմության միավորների փոխարեն կկարողանան հատուկ գնով հեռախոս ձեռք բերել:

«Երկու տարի առաջ Orange-ը նորարար կոնցեպտ ներմուծեց շուկա. կենդանիների պատկերներով իր ամսական բաժանորդագրությունները՝ բացառիկ գնով հեռախոս ձեռք բերելու հնարավորության հետ միասին: Այսօր մենք նորություն ենք ներմուծում մեր հավատարիմ բաժանորդներին պարգեւատրելու ոլորտում: Ուրախ ենք եւս մեկ հաճելի անակնկալ մատուցել Դելֆինի, Պանտերայի ու Թիթեռի մեր հավատարիմ բաժանորդներին, վերջիններիս ամսական փաթեթներում մեծ ծավալով րոպեներ, SMS-ներ ու մեգաբայթեր ավելացնելուց ընդամենը երկու օր հետո: Մեր բաժանորդներն այժմ վստահ են. ինչքան երկար մնան Orange-ի բաժանորդ, այնքան ավելի շատ կլինեն իրենց առավելությունները», ասաց Օրանժ Արմենիայի գլխավոր տնօրեն Ֆրանսիս Ժելիբտերը:

# Համաներումն այսօր ուժի մեջ է մտնում

**Երեկ Ազգային ժողովն ընդունեց Հայաստանի նախագահի առաջարկած որոշումը՝ համաներում հայտարարելու մասին 102 կողմով: Այն ուժի մեջ կմտնի 24 ժամվա ընթացքում, այսինքն՝ արդեն այսօր կեսօրին: Հարցի եզրափակիչ ակորդը ներկայացրած արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը նշեց, թե ողջ գիշեր դժվար հոգեվիճակում էր, որի մեջ երեւի լինում են դատավորները դատավճիռ կայացնելուն նախորդող գիշերը, թեեւ համաներումն արդարադատության իրականացում չէ, այլ՝ մարդասիրական ակտ: Ըստ Թովմասյանի՝ համաներումն ընդհանուր առմամբ կտարածվի 1200-1300 դատապարտյալի վրա, նրանցից 500-ից ավել դատապարտյալ ազատ կարձակվի:**

**Մ. Խ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841, 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

# Ի՞նչ աշխատավարձեր կստանան քաղծառայողները 2014-ի հուլիսի 1-ից

Պետական համակարգի աշխատողների աշխատավարձերը, այսպիսով, եկող տարվա հուլիսի 1-ից կբարձրանան: Ինչպես արդեն նշել էինք մեր նախորդ հրապարակման մեջ («Բյուջե 2014-ը այնպիսին չէր, ինչպիսին նախատեսվում էր», 1.10.2014թ.), աշխատավարձերի բարձրացումը նախատեսված էր հունվարի 1-ից եւ 85 տոկոսով, սակայն դրանք կբարձրանան 40 տոկոսով: Միաժամանակ, կգործի սանդղակ, որով կկարգավորվի աշխատավարձերի ոլորտում ներկայիս խառնաշփոթը, երբ, օրինակ, երկրի նախագահի աշխատավարձն ավելի ցածր էր, քան դատավորի աշխատավարձը: Թե ինչպիսի՞ փոփոխություններ են կրելու բարձրաստիճան պաշտոնյաների աշխատավարձերը, կներկայացնենք հաջորդ հրապարակման մեջ:

Այս անգամ ներկայացնենք կրտսեր, առաջատար, գլխավոր եւ բարձրագույն պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի սանդղակը: Տեղեկացնենք, որ կիրառվել է բազային դրույքաչափի՝ 40 հազար դրամի նկատմամբ գործակիցը: Այսինքն, օրինակ, 1,68 գործակից նշված աշխատավարձի չափն իմանալ կարելի է այդ թիվը բազմապատկելով 40 հազար դրամով, կստացվի մոտ 67 հազար դրամ: Սակայն դա այսպես կոչված «կեղտոտ» աշխատավարձն է, որից պետք է հանել եկամտային հարկի չափը՝ տվյալ դեպքում մոտ 24 տոկոս, որը սահմանված է մինչեւ 120 հազար դրամ աշխատավարձ ստացողների համար: 120 հազարից ավելի դեպքում եկամտային հարկը 26 տոկոս է՝ գումարած որոշակի հաշվարկային մեծություն, 2 մլն դրամից ավելիի դեպքում՝ 36 տոկոս եւ որոշակի հաշվարկային մեծություն:

Այսպիսով՝ ներկայացնում ենք քաղծառայողների տարբեր մակարդակներում տարբեր ենթախմբերի, ըստ աշխատած տարիների փոփոխվող աշխատավարձերի չափերը: Այս սանդղակը հաստատվել է կառավարությունում, բայց դեռեւս պետք է քննարկվի եւ ընդունվի Ազգային ժողովում:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

| Մակարդակները | [illegible] | Կրտսեր պաշտոններ | | | Առաջատար պաշտոններ | | | Գլխավոր պաշտոններ | | | Բարձրագույն պաշտոններ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 3-րդ ենթախմբի պաշտոններ | 2-րդ ենթախմբի պաշտոններ | 1-ին ենթախմբի պաշտոններ | 3-րդ ենթախմբի պաշտոններ | 2-րդ ենթախմբի պաշտոններ | 1-ին ենթախմբի պաշտոններ | 3-րդ ենթախմբի պաշտոններ | 2-րդ ենթախմբի պաշտոններ | 1-ին ենթախմբի պաշտոններ | 2-րդ ենթախմբի պաշտոններ | 1-ին ենթախմբի պաշտոններ |
| 11 | [illegible] | 1.68 | 1.95 | 2.28 | 2.66 | 3.11 | 3.64 | 4.40 | 5.34 | 6.49 | 7.91 | 9.65 |
| 10 | [illegible] | 1.63 | 1.90 | 2.21 | 2.58 | 3.01 | 3.53 | 4.27 | 5.17 | 6.29 | 7.65 | 9.33 |
| 9 | | 1.58 | 1.84 | 2.14 | 2.50 | 2.92 | 3.42 | 4.13 | 5.01 | 6.09 | 7.43 | 9.03 |
| 8 | | 1.54 | 1.79 | 2.08 | 2.42 | 2.83 | 3.31 | 4.01 | 4.85 | 5.89 | 7.17 | 8.74 |
| 7 | [illegible] | 1.49 | 1.73 | 2.02 | 2.35 | 2.75 | 3.21 | 3.88 | 4.70 | 5.71 | 6.94 | 8.46 |
| 6 | | 1.45 | 1.68 | 1.96 | 2.28 | 2.66 | 3.11 | 3.76 | 4.55 | 5.52 | 6.72 | 8.18 |
| 5 | | 1.41 | 1.63 | 1.90 | 2.21 | 2.58 | 3.02 | 3.64 | 4.41 | 5.35 | 6.50 | 7.92 |
| 4 | [illegible] | 1.37 | 1.59 | 1.84 | 2.15 | 2.50 | 2.92 | 3.53 | 4.27 | 5.18 | 6.29 | 7.66 |
| 3 | | 1.33 | 1.54 | 1.79 | 2.08 | 2.43 | 2.83 | 3.42 | 4.14 | 5.01 | 6.09 | 7.41 |
| 2 | | 1.29 | 1.49 | 1.73 | 2.02 | 2.35 | 2.75 | 3.31 | 4.01 | 4.86 | 5.89 | 7.17 |
| 1 | | 1.25 | 1.45 | 1.68 | 1.96 | 2.28 | 2.66 | 3.21 | 3.88 | 4.70 | 5.71 | 6.94 |

# Ռուսական վարկն ամբողջությամբ կմարվի եվրոպարտատոմսերից ստացած գումարով

*1-ին էջից*

Տիգրան Սարգսյանը կարեւորեց, որ Հայաստանի Հանրապետությունն առաջին անգամ կարողացավ հայտնվել ներդնողների քարտեզի վրա, եւ այսուհետեւ 100-ից ավելի հեղինակավոր ներդնողներ հետեւելու են Հայաստանի բոլոր՝ ֆինանսական, մակրոտնտեսական գործընթացներին: Սա նաեւ մասնավոր հատվածի համար միջոցներ ներգրավելու բացառիկ հնարավորություն է ստեղծում եւ ավելի մատչելի ֆինանսական միջոցներ ստանալուն համաշխարհային ֆինանսական շուկաներում՝ ավելի ցածր տոկոսադրույքներով:

Այս նույն հիմնավորումները մամուլի ասուլիսի ժամանակ ասաց նաեւ ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանը: Նա նաեւ նշեց այլ գործոններ, որոնցով պայմանավորվել է եվրոպարտատոմսերի թողարկումը Հայաստանի կողմից: Մասնավորապես, միջազգային ֆինանսական կազմակերպությունների չափորոշիչներով Հայաստանն անցել է աղքատ երկրներից միջին եկամուտներ ունեցող երկրների շարքին, եւ մեզ այլեւս չեն տալիս արտոնյալ վարկեր: Սա նաեւ նշանակում է երկրի ֆինանսական աղբյուրների դիվերսիֆիկացիա, քանի որ եվրոպարտատոմսերի թողարկմամբ հնարավոր կլինի գումարներ ստանալ ոչ միայն միջազգային ֆինանսական կազմակերպություններից կամ դոնոր երկրներից, այլեւ մասնավոր հատվածից:

Դավիթ Սարգսյանը տեղեկացրեց, որ Հայաստանի պարտատոմսերը ձեռք են բերել 152 ներդնող, ինչը համարվում է բավական դիվերսիֆիկացված ցուցանիշ, քանի որ մեկ, երկու կամ երեք ներդնողից կախում չկա: Նրանցից 42 տոկոսը ԱՄՆ-ի ներդնողներ են, 23 տոկոսը՝ Մեծ Բրիտանիայի, 17 տոկոսը՝ մայրցամաքային Եվրոպայի ներդնողները, մնացածը՝ այլ երկրներից: Հայկական եվրոպարտատոմսերի վերջնական պահանջարկը ավելի մեծ է եղել եւ կազմել է 2,7 մլրդ դոլար:

«Ինչո՞ւ ռուսական ավելի ցածր տոկոսով վարկը փաստացի փոխարինվեց ավելի բարձր տոկոսով վարկի հետ» հարցին ֆինանսների նախարարը պատասխանեց, որ չի կարելի համեմատել այս երկու վարկերը, քանի որ ռուսական վարկը լողացող է՝ լիբոր գումարած 3 տոկոս, ինչը նշանակում է, որ այն կարող է փոփոխական լինել: Դա չի կարելի համեմատել ֆիքսված տոկոսադրույք ունեցող եվրոպարտատոմսերի հետ: Բացի դրանից, այլեւ անհրաժեշտ չի լինի 7 տարի սպասարկել ռուսական վարկը: Միեւնույն ժամանակ, նախարարը հայտնեց, որ 700 մլն դոլար եվրոպարտատոմսերի մարումը 7 տարի հետո պետք է կատարվի միանգամից: Ընդ որում, չբացառելով այդ նպատակով նոր պարտատոմսերի թողարկումը, բայց դժվարացավ ասել, դա ե՞րբ է հնարավոր՝ 3, 7, թե 10 տարի հետո: Նախարարի հավաստմամբ՝ պարտատոմսերի թողարկման շնորհիվ 2014-ի բյուջեում 18 մլն դոլարի խնայողություն կունենանք:

# Հայտարարվեց բնապահպանական առաջիկա միջոցառումների ժամանակացույցը

## *ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) համատեղ մամուլի ասուլիսը*

«Արեւորդի» միջազգային բնապահպանական փառատոնն իրականացվում է Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի աջակցությամբ: 2007թ.-ից հիմնադրամի գլխավոր գործընկերը հեռահաղորդակցության առաջատար օպերատորն է: Ինքնատիպ այս իրադարձությունը, որն արդեն 4-րդ անգամ կիրականացվի Հայաստանում, բնապահպանական միակ փառատոնն է հարավկովկասյան տարածաշրջանում: «Արեւորդի» միջազգային բնապահպանական փառատոնի նպատակն է հանրության ուշադրությունը հրավիրել շրջակա միջավայրի, կենդանական ու բուսական աշխարհին սպառնացող խնդիրների վրա, ինչպես նաեւ բարձրացնել հանրային իրազեկվածությունը՝ Հայաստանի կենսաբազմազանության եւ դրա պահպանման կարեւորության վերաբերյալ:




«Շրջակա միջավայրի պահպանման եւ դրա խնդիրների վերաբերյալ իրազեկումը պետք է երեխաների դաստիարակության անբաժանելի մաս լինի: Յուրաքանչյուր մարդ վաղ տարիքից պետք է հասկանա, որ Երկիր մոլորակը մարդկության ընդհանուր տունն է, եւ այդ տանն ապրող ամեն ոք ունի իր պարտականությունները եւ պատասխանատվության իր չափը՝ այդ տունը մաքուր եւ ապահով պահելու համար:

Հայաստանում այս առաքելությունն իր վրա է վերցրել Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը, եւ ՎիվաՍել-ՄՏՍ-ն արդեն 6-րդ տարին հպարտորեն կանգնած է նրա կողքին՝ աջակցելու այս անչափ կարեւոր եւ դժվար գործի իրականացմանը»,-նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

Փառատոնի 2013թ.-ի ծրագիրն ընդգրկում է միջազգային բնապահպանական մանկական ֆիլմերի մրցույթ, բնապահպանական խնդիրների շուրջ քննարկումներ եւ հանրային միջոցառումներ: «Արեւորդի» միջազգային բնապահպանական 4-րդ փառատոնն այս տարի կներկայանա նոր սկզբունքով, այն է՝ ավելացնել մասնակիցների թիվը՝ նվազեցնելով բնապահպանական խնդիրները: Այս ամենը հնարավոր կլինի իրականացնել փառատոնի առցանց կազմակերպման միջոցով, որի շրջանակներում ֆիլմերի ցուցադրություններ կկազմակերպվեն հայաստանյան հեռուստաալիքներով, համացանցով: Դրանք կուղեկցվեն հանրային ակտիվ քննարկումներով:

Ինչպես նախորդ տարիներին, փառատոնի այս տարվա ծրագիրը եւս հայ հանդիսատեսի դատին կներկայացնի վավերագրական ֆիլմերի լավագույն ընտրանի՝ նվիրված կենդանիներին եւ բնապահպանական խնդիրներին: Աշխարհի տարբեր երկրներից ընտրված շուրջ 30 ֆիլմ կհեռարձակվի հայկական տարբեր հեռուստաալիքներով եւ առցանց:

«Արեւորդի» միջազգային բնապահպանական 4-րդ փառատոնի գործընկերների թվում են «Շողակաթ», «Արմնյուզ» հեռուստաալիքները եւ «Սիվիլնեթ» ինտերնետային հեռուստաալիքը: Ֆիլմերը կցուցադրվեն 2013թ.-ի հոկտեմբերի 18-ից մինչեւ 27-ը:

Հայաստանի բնապահպանական խնդիրներին, մասնավորապես՝ աղբի վերամշակմանն ու վայրի բնության պահպանությանն անդրադարձող փառատոնի ֆիլմերը կուղեկցվեն հանրային քննարկումներով: Դրանց կմասնակցեն գիտնականներ, բնապահպաններ, քաղաքացիական-հասարակական ակտիվիստներ եւ այլն:

Փառատոնի շրջանակներում կիրականացվի նաեւ հիմնական 3 միջոցառում՝ նկարչական օր, մրցանակների հանձնման արարողություն եւ կենդանիների դիմակահանդես-շքերթ: Գործընկերների՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (GEF) հետ համատեղ, Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը հոկտեմբերի 25-ին բոլորին հրավիրում է FPWC-ի «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան»՝ մասնակցելու Ուրծաձորի էկո-կրթական կենտրոնի բացման արարողությանը, որը կուղեկցվի խորհրդանշական ծառատունկով:

«Արեւորդի» փառատոնի միջոցառումների ժամանակացույց.

**Հոկտեմբերի 6**

6-րդ Նկարչական Օր եւ Երեւանի կենդանաբանական այգու 72-ամյակին նվիրված տոնակատարություններ

**Հոկտեմբերի 18**

Մանկական ֆիլմերի մրցանակների հանձնման արարողություն

Ֆիլմի ցուցադրություն եւ քննարկում «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում

**Հոկտեմբերի 25**

Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանում «Ուրցաձորի էկո-կրթական կենտրոնի» բացման արարողություն եւ ծառատունկ (Արարատի մարզի Ուրցաձոր համայնք)

Ֆիլմի ցուցադրություն եւ քննարկում «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում

**Հոկտեմբերի 26**

«Կոնֆուսաո» սամբա խմբի բացօթյա համերգը Սիրահարների այգում

**Հոկտեմբերի 27**

Կենդանիների դիմակահանդես-շքերթ Երեւան քաղաքի փողոցներով, որը կուղեկցվի «Կոնֆուսաո» սամբա խմբի համերգով՝ Երեւանի կենդանաբանական այգում:

# Եվրոմիությունը նույնպես դժգոհ է Ադրբեջանից

Երեկ Ադրբեջանում նախագահի ընտրությունների հետ կապված իրավիճակի վերաբերյալ անհանգստություն են հայտնել Եվրոմիության արտաքին քաղաքականության եւ անվտանգության եւ ընդլայնման ու հարեւանության հարցերով հանձնակատարներ Քեթրին Էշթոնը եւ Շտեֆան Ֆյուլեն: Համատեղ հայտարարության մեջ ընդգծված է իշխանությունների կողմից «քաղաքացիական ակտիվիստների, իրավապաշտպանների, ընդդիմության եւ անկախ լրատվամիջոցների դեմ նախագահական ընտրությունների նախօրյակին մեծացած ճնշումը»:

ԵՄ բարձրաստիճան պաշտոնյաներն Ադրբեջանում վերջին ձերբակալությունները համարել են «կասկածելի, որոնք իրականացվել են մարդու իրավունքների հարգման միջազգային ստանդարտների խախտմամբ»: Հայտարարության մեջ անուններ նշված չեն: Էշթոնը եւ Ֆյուլեն նաեւ հավաստել են, որ Եվրոմիությունն «Ադրբեջանի կառավարությունից ակնկալում է իրավական ընթացակարգերի շրջանակներում... թափանցիկ եւ արդարացի հետաքննություն»:

Հայտարարության հեղինակները հատկապես շեշտադրել են «արդարացի մթնոլորտում նախագահական ընտրությունների անցկացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը» եւ զգուշացրել, որ «Եվրոմիությունը շարունակում է հետեւել Ադրբեջանում մարդու իրավունքների հարգման իրավիճակին»: Առավել ուշագրավ է հայտարարության վերջին ձեւակերպումը, որով Եվրոմիությունը պատրաստակամություն է հայտնում «օգնելու Ադրբեջանին՝ կատարելու մարդու իրավունքների հարգման իր ստանձնած միջազգային պարտավորությունները»:

Ասվածը եթե դիվանագիտական լեզվից «թարգմանենք», ապա կստացվի, որ Եվրոմիությունն արձանագրում է Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների հարգման միջազգային հանձնառությունների խախտում: Նախագահական ընտրություններից ընդամենը մեկ շաբաթ առաջ արված այս խիստ քննադատական դիտողությունն, ամենայն հավանականությամբ, Եվրոմիության կողմից Իլհամ Ալիեւին «դեղին քարտ ցույց տալու» իմաստ ունի:

Այդ նախազգուշացումը հաշվի առնելու ժամանակ, ինչպես նաեւ ցանկություն, սակայն, Ադրբեջանում իշխող վարչախումբը չունի: «Որ ընդդիմությունն առաջադրել է նախագահի թեկնածու եւ օրենքով իրականացնում է քարոզչություն, վկայում է, որ Ադրբեջանում ժողովրդավարությունը ամենաբարձր մակարդակի վրա է»,- հայտարարել է Իլհամ Ալիեւի ներկայացուցիչ, իշխող կուսակցության գործադիր քարտուղարի տեղակալ Մուբարիզ Գուրբանլին եւ հավելել, որ «մյուս բոլոր պահանջները նշանակում են կոպիտ միջամտություն Ադրբեջանի ներքին գործերին»:

Ժողովրդավարության եւ օրինականության մասին քարանձավային այս պատկերացումներով առաջնորդվող Ադրբեջանում, անկասկած, Էշթոնի եւ Ֆյուլեի հայտարարությունը նույնպես կորակվի «ինքնիշխան երկրի գործերին կոպիտ միջամտություն» կամ «հակաադրբեջանական ուժերի հերթական սադրանք»: Հարեւան երկրում ոչնչից չեն խորշում, միայն թե տպավորություն ստեղծվի, որ «հանրապետության ընտրողների ջախջախիչ մեծամասնությունը միանշանակորեն սատարում է Իլհամ Ալիեւին»:

Երեկ, մասնավորապես, նախագահի ընդդիմադիր թեկնածու Ջամիլ Հասանլիի նախընտրական հանդիպումը, որ պետք է անցկացվեր Գյանջայի դրամատիկական թատրոնի շենքում, տեւել է ընդամենը 15 րոպե: «Բախումներից խուսափելու նպատակով, երբ պարզ է դարձել, որ դահլիճում հավաքվել են նաեւ սադրիչներ, Հասանլին ընդհատել է ելույթը եւ հեռացել քաղաքից»,- հաղորդել է «Թուրան»-ի թղթակիցը:

Ամենանողկալին, սակայն, տեղի է ունեցել Ադրբեջանի ԱԱ նախարարության քննչական մեկուսարանում: Նախընտրական քարոզարշավին ընդդիմության կողմից մասնակցելու փաստացի մեղադրանքով ձերբակալված, երիտասարդական շարժման ակտիվիստ Դաշգին Մելիքովը «հանդես է եկել հայտարարությամբ», որտեղ ասված է. «Ես Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցության անդամ եմ: Տեսնում եմ Ադրբեջանի այսօրվա զարգացումը եւ լիովին պաշտպանում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի կողմից իրականացվող քաղաքականությունը, որի համար խնդրում եմ ինձ հեռացնել ԱԺՃ-ից»:

Ինչպես միշտ, Ադրբեջանի հատուկ ծառայություններն այնքան «պրոֆեսիոնալ» են գործել, որ չեն կարողացել «Մելիքովի հայտարարության» տեքստում թաքցնել իրենց երկար ականջները: «Փաստաթուղթն» ավարտվում է այսպես. «Ուզում եմ տեղեկացնել իմ նախկին ընկերներին, որ սա իմ անձնական տեսակետն է: Ես միաժամանակ առաջիկա նախագահական ընտրություններում պաշտպանում եմ Իլհամ Ալիեւի թեկնածությունը»:

Ժամանակային առումով այս «հայտարարությունը» հաջորդել է Եվրոմիության բարձրաստիճան պաշտոնյաների կողմից Ադրբեջանում մարդու իրավունքների սահմանափակման մասին անհանգստությանը: Բաքվում իշխող վարչախումբն ահա այսպես է «իրավական ընթացակարգերի շրջանակներում անցկացնում թափանցիկ եւ արդարացի հետաքննություն»: Ինչպես ասում են, «գնդակը ԵՄ կիսադաշտում է»: Ինչպիսի՞ն կլինի արձագանքը...

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Իրանում սպանվել է կիբեռանվտանգության պատասխանատուն

Իրանում սպանվել է կիբեռանվտանգության գերատեսչության ղեկավար Մոջթաբա Ահմադին: Նրա դիակը գտել են Թեհրանի արվարձան Քերեջից ոչ հեռու, անտառում: Այդ մասին հաղորդում է բրիտանական «Դեյլի թելեգրաֆ» թերթը, վկայակոչելով Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հետ կապված Alborz News կայքէջը:

Մոջթաբա Ահմադիին վերջին անգամ ողջ տեսել էին սեպտեմբերի 28-ին, տնից դուրս գալու պահին: Մի ականատես Alborz News-ին հայտնել է, որ ավելի ուշ նրան գտել են մեռած, հրազենային վերքերով: Ականատեսի խոսքերով, վերքերի բնույթը ցույց է տալիս, որ մոտ տարածությունից նրա վրա կրակել են ատրճանակից:

Ոստիկանության ներկայացուցիչը հայտարարել է, որ սպանության երկու մասնակիցները հեռացել են մոտոցիկլետով: Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը սկսել է քննություն: Առայժմ չի հաղորդվում, թե ով կարող է պատվիրած լինել այդ սպանությունը:

2007 թվականից մինչեւ օրս Իրանում սպանվել է ատոմային էներգետիկայի բնագավառի 5 մասնագետ, ինչպես նաեւ բալիստիկ հրթիռների մշակման ծրագրի ղեկավարը: Թեհրանն այդ հանցագործությունների համար մեղադրել է Իսրայելին, որը բացեիբաց հանդես է գալիս իրանցիների միջուկային ծրագրի դեմ՝ վախենալով Իրանում միջուկային զենքի ստեղծումից: Արեւմուտքի երկրները Իրանին մեղադրել են նաեւ կիբեռգրոհների կազմակերպման մեջ, սակայն վերլուծաբանները կարծում են, որ դրանք այնքան վտանգավոր չեն:

Պ. Ք.

## ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ-ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԾԱԾՈՒԿ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

# Բելառուսի կայունության պատճառները

**Բելառուսներին ի՞նչն է ստիպում համակերպվել երկրում գոյություն ունեցող քաղաքական վարչակարգին: Ինչպիսի՞ն է Բելառուսի իշխանությունների հետ քաղաքացիների ծածուկ սոցիալական պայմանագրի բովանդակությունը: Դա փոփոխվե՞լ է արդյոք քաղաքական ու տնտեսական լուրջ ճգնաժամի պատճառով: Այդ հարցերին փորձել են պատասխանել Լիտվայում գրանցված Բելառուսի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (BISS) գիտնականները:**

**BISS-ի վերլուծաբանները իրենց հետազոտության մեջ հանգել են այն հետեւության, որ Բելառուսի ներկայիս իշխանությունների հարատեւման հարցում նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի անձնական հմայքը եւ բռնությունների վախը բնավ էլ վճռորոշ գործոններ չեն: Իրավիճակի նկատմամբ հասարակայնության տարբեր սոցիալական խմբերի ռացիոնալ վերաբերմունքը հանգեցրել է քաղաքացիների եւ պետության միջեւ ծածուկ սոցիալական պայմանագրի կնքմանը, նշում են հետազոտության հեղինակները: Նրանք սոցիալական պայմանագրի երեւույթը սկսել էին ուսումնասիրել 2008-2009 թթ., եւ հետազոտությունը շարունակել են 2013 թվականին:**

**Այս տարվա հետազոտությունը հիմնված է այսպես կոչված ֆոկուսային խմբերի հարցման վրա: Հարցման արդյունքները հոկտեմբերի 1-ին Վիլնյուսում ներկայացրել է BISS-ի վերլուծաբան Ելենա Արտեմենկոն: Նա հավաստել է, որ վերջին 5 տարիներին տեղի ունեցած փոփոխությունները, այդ թվում՝ քաղաքական ու տնտեսական ճգնաժամի հետեւանքները, կրիտիկական չեն եղել ծածուկ սոցիալական պայմանագրի համար եւ հանգեցրել են դրա ոչ թե լուծարմանը, այլ երկարաձգմանը:**

**Արտեմենկոյի խոսքերով, բելառուսները, ինչպես եւ 5 տարի առաջ, պատրաստ են ընդունել պետության առաջադրած պայմանները: Ըստ որում, բուն պետության համար սոցիալական պայմանագիրն էժանացել է. նրա տրամադրած բարիքների ծավալը կրճատվել է, բայց բնակչությունն այդ մինիմումն ավելի բարձր է գնահատում: Դրա շնորհիվ պետությունը շահող է դուրս գալիս՝ պակաս ծախսերի պայմաններում ստանալով նախկին աջակցությունը:**



**Միեւնույն ժամանակ, նվազել է քաղաքացիների կախվածությունը իշխանությունից: Արտեմենկոյի խոսքերով, բելառուսները ներկայումս պատասխանատվություն են զգում սեփական կյանքի համար: Պետությունը չի դիպել հիմնական, առավել էական ոլորտներին: Նա շարունակում է վճարել նպաստներ, կրթաթոշակներ, կենսաթոշակներ, երաշխավորում է աշխատանքի տեղավորումը, վաստակելու հնարավորություն է տալիս, կատարում աշխատողների հանդեպ գործատուների պարտավորությունները, պաշտպանում է քրեական տարրերից եւ այլն:**

**Հետազոտության հեղինակները ծածուկ սոցիալական պայմանագրի հարատեւման եւս մեկ պատճառ են համարում այն հանգամանքը, որ Բելառուսը բավական արագ դուրս եկավ ճգնաժամի սուր փուլից: Դրա շնորհիվ բնակչության մեջ չառաջացավ սեփական ակնկալիքները վերանայելու եւ բարեփոխումներ պահանջելու ցանկություն:**

# ԵԽԽՎ-ն թլփատումը գնահատեց որպես մարդու իրավունքների խախտում

**Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով (ԵԽԽՎ) միջազգային կազմակերպությունը, որի որոշումները, որպես կանոն, ազդում են Եվրոմիության երկրների վրա, ընդունել է բանաձեւ, համաձայն որի թլփատման ծեսը մարդու իրավունքների խախտում է: Այդ մասին հաղորդում է The Jewish Press հրեական կայքէջը:**

**Բանաձեւի օգտին քվեարկել են 78, դեմ՝ 13 պատգամավորներ: ԵԽԽՎ 15 պատգամավոր ձեռնպահ է մնացել: Գերմանացի պատգամավոր Մառլեն Ռուպրեխտը ընդգծել է, որ թլփատումը երեխաների ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի խախտում է:**

**Եվրոպայի խորհուրդը տարբեր երկրների իշխանություններին կոչ է արել «հստակորեն սահմանել բժշկական եւ մյուս պայմանները, որոնք պետք է պահպանվեն ոչ բժշկական նպատակներով տղաների թլփատման դեպքում»:**

**Ըստ որում, բանաձեւը պահանջներ է ներկայացնում եվրոպական երկրների իշխանություններին. նրանք պարտավոր են ուսումնասիրել «երեխաների ֆիզիկական անձեռնմխելիության վրա անդրադարձող եւ բժշկական վկայություններով չարդարացված վիրահատությունների հարցերը»:**

**Անցյալ շաբաթ Շվեդիայի քաղաքական գործիչները եւ բժիշկները կոչ էին արել արգելել 18 տարին չլրացած տղաների թլփատման ծեսը: Համապատասխան փաստաթղթում մասնավորապես նշվում էր, որ առանց բժշկական հիմնավորման թլփատում կարող է իրականացվել լոկ այն դեպքում, եթե տղան «հասել է ծեսն իմաստավորելու եւ վիրահատությանը համաձայնելու համար անհրաժեշտ տարիքին եւ հասունության աստիճանին»:**

Պ. Ք.

# Մշակույթ

ՆՈՐ ԳՐՔԵՐ

## Հրատարակվել են Շմավոն Շմավոնյանի «Արարատ» ալբոմն ու Յուրի Պետրոսյանի «Պարույր Սեւակ. Բարի երազըս ձե՞զ, սիրելիներ» գիրքը







Էդիթ Պրինտը հրատարակել է Պարույր Սեւակին նվիրված հանրագիտակը, ուր Յուրի Պետրոսյանը բանաստեղծին ներկայացնում է առօրյա կյանքում, մտերիմների շրջապատում, ուրախության ու տխրության պահերին, քնքշանք ու բարկություն արտահայտելիս: Հանրագիտակում Սեւակի պոեզիայի սիրահարները նրան ճանաչում են որպես շինարարի, այգեպանի, քնքուշ հոր, սիրող տղամարդու եւ իսկապես մեծ մարդասերի, ամենահայի:

Հրատարակել է նաեւ Հայաստանի վաստակավոր նկարիչ Շմավոն Շմավոնյանի «Արարատ» գիրք-ալբոմը, որն ընդգրկում է նկարչի՝ 1993-2013 թթ.-ին արված կտավները, որոնք զուգորդված են հայ եւ օտարազգի հեղինակների՝ Արարատ լեռան մասին քառատողերով, նկարչի կենսագրական տվյալներով: Նրա կտավներում բնութեան ձայնն այնքան արտահայտիչ է, որ «հայեացք մը նետելով անոնց վրայ, կարծես թէ կառնչուիս նկարիչի ներաշխարհին հետ, ուր գիւղական անաղարտութիւնը, մաքրամաքուր զգացումներու, ապրումներու հրաշալի պատկերներ դրոշմուած են... »:

«Արարատ» գիրքը հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով է:

Այս ոչ մեծածավալ գրքում, որը կարելի է նկարչի ստեղծագործությունների ալբոմ անվանել, հայրենական բնությունը պատկերող կտավներին համահունչ հայ եւ օտարազգի բանաստեղծների քառատողեր են գրված:

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

## Վախճանվել է գրող Թոմ Կլենսին



«Հայրենասերի խաղեր» (Patriot Games), «Կարմիր հոկտեմբերի որոնումները» (The Hunt for Red October) եւ այլ սառը պատերազմական թեմաներ շոշափող «թրիլլերների» հեղինակ Թոմ Կլենսին վախճանվել է Բալտիմորում հոկտեմբերի 1-ին 66 տարեկան հասակում: «Պենգուին Գրուպ» (ԱՄՆ) հրատարակչատան հաղորդման մեջ, որը հետագայում տարածել է Ասոշիեյթեդ պրեսը, չի նշվել մահվան պատճառը:

Բարձրահասակ, նիհար, փոս ընկած աչքերով (որոնք գրեթե միշտ ծածկված են եղել արեւի մուգ ակնոցներով) Կլենսին համաշխարհային ճանաչում էր ձեռք բերել որպես ռազմական, հետախուզական ոլորտի տպավորիչ վեպերի հեղինակ: Ըստ իր հրատարակչի ավելի քան 100 միլիոն օրինակ է վաճառվել իր գրքերից, որոնցից մի քանիսը դարձել են նաեւ հետաքրքրաշարժ եւ հիշարժան կինոնկարներ: Նրա երազանքն է եղել գրել մի այնպիսի գիրք, որը կնպաստի իր անունը դասելու Կոնգրեսի գրադարանի անվանի հեղինակների շարքում: Պետք է նշել, որ նրա ցանկությունը լիուլի կատարվել է:

Քաղաքական ասպարեզում պահպանողական դիրքորոշում ունեցող Կլենսին 1982-ին սկսել է գրել «The Hunt for Red October» գիրքը, հիմնվելով 1975 թվի նոյեմբերին խորհրդային հրթիռատար Ֆրեգատ (հետախուզանավ)՝ «Ստորոժեվոյի» հետ կապված իրական պատահարի վրա: Վեպը լույս է տեսել 1984-ին եւ ինչ-որ մեկը այն որպես ծննդյան տոների նվեր նվիրել է նախագահ Ռեյգանին: Վերջինս մի ճաշկերույթի ժամանակ նշել է, որ քունը կորցրել է, որովհետեւ գիրքն այնքան հետաքրքրական է, որ չի կարողանում այն ցած դնել: Այս արտահայտությունը նպաստել է, որ Կլենսիի անունը հայտնվի «Նյու Յորք Թայմսի» «բեստսելլերների» ցուցակում:

Կլենսին ծնվել էր Բալտիմորում 1947-ին: Հաճախել է Լոյոլա քոլեջ, որտեղ ֆիզիկայի մասնագիտությունը երկրորդ կուրսում փոխել է անգլերեն գրականությամբ: Մեծ մասամբ ապրել է Մերիլենդում: Իր մյուս գրքերի ցուցակում են «The Bear and the Dragon» (Արջը եւ վիշապը), «The Cardinal of the Kremlin» (Կրեմլի կարդինալը), «Red Storm Rissing» (Կարմիր փոթորիկը բարձրանում է) եւ «The Sun of All Fears» (Բոլոր վախերի արեւը) վեպերը, որոնցում հետագա իրադարձությունների կանխագուշակումները խիստ հատկանշական են:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

## Կինո+աշուն. մեկնարկում է ազգային կինոյի ամիսը




Հոկտեմբերի 5-ին ԱՊՀ մշակութային մայրաքաղաք Գյումրիից կմեկնարկի ամենամյա «Կինոաշուն» ազգային կինոյի ամիս ծրագիրը:

Այս տարին հոբելյանական է. հայկական կինոյի հիմնադրման 90 եւ հայկական անիմացիայի 75-ամյակներն են, եւ «Կինոաշուն» ծրագիրը կնվիրվի դրանց:

Այս տարի առաջին անգամ «Կինոաշնան» շրջանակներում, կազմակերպիչները հայտարարել են կինոմրցույթ՝ «Երեւանն իմ քաղաքն է» թեմայով, երեկ լրագրողների հետ հանդիպմանն ասաց Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետ Կամո Մովսիսյանը եւ ավելացրեց. «Յուրաքանչյուր ոք, որն ունի տեսագրող սարք, կարող է կարճամետրաժ ֆիլմ նկարահանել եւ ներկայացնել մրցույթին: Տեսանյութը կարող է նկարահանված լինել նույնիսկ բջջային հեռախոսով: Սա լավ նվեր կլինի մեր բոլորի սիրելի մայրաքաղաքի՝ Երեւանի 2795-րդ տարեդարձին»:

Նախորդ տարիների օրինակով, այս տարի էլ կազմվել են տարբեր թեմատիկ կինոծրագրեր, առանձին ծրագրեր Երեւանի համայնքների, բուհերի, մարզերի, զինվորական մասերի համար: Պատրաստվել են նաեւ հետահայաց ցուցադրությունների ծրագրեր: Հատկանշական է, որ նախատեսված է անցկացնել Արտավազդ Փելեշյանի, Ներսես Հովհաննիսյանի, Լեւոն Իսահակյանի եւ Արմեն Միրաքյանի հոբելյաններին նվիրված հետահայաց ցուցադրություններ: Բացի այդ, հանրությանը կներկայացվի նաեւ վավերագրական նյութեր՝ Նարեկացի արվեստի միությունում:

Հայ կինոյի 90-ամյակի կապակցությամբ Երեւանի կինոյի ու թատրոնի պետական ինստիտուտում կանցկացվի գիտաժողով, իսկ ընթերցված զեկույցները կտպագրվեն առանձին ժողովածուում:

Ազգային կինոկենտրոնի տնօրեն Գեւորգ Գեւորգյանն անդրադառնալով ծրագրին՝ ասաց. «Կինոաշունը» գնալով թափ է առնում: Երբ առաջին տարին ծրագիրը կյանքի էինք կոչում, բազմաթիվ ընդվզումների առջեւ կանգնեցինք: Մարզերից ասում էին, որ գյուղացին սարերում, դաշտերում է եւ չի գա ֆիլմ դիտելու, իսկ եթե ցանկանում եք, ապա Ձեր տեխնիկայով եկեք: Իսկ ահա այս տարի դրական վերաբերմունքի արժանացանք եւ այժմ պահանջարկը մեծ է: Ծրագրում ընդգրկված են ոչ միայն համայնքներ, այլեւ՝ զորամասեր: Պաշտպանության նախարարությունը ֆիլմերի ցանկ է ուղարկել, որոնք մենք «Կինոաշուն» ծրագրի շրջանակում կցուցադրենք զորամասերում»:

Նշենք, որ Երեւանում բացի համայնքներից, ֆիլմեր են ցուցադրվելու նաեւ «Նաիրի» կինոթատրոնում, Նարեկացի արվեստի միությունում, Հ. Մալյանի անվան թատրոնում եւ բուհերում:

Ինչպես յուրաքանչյուր տարի, այս տարի եւս կազմակերպվում են բացօթյա ցուցադրումներ «Սիրահարների այգում»: Այս տարի ցուցադրություններն սկսվեցին ավելի վաղ՝ սեպտեմբերի 12-ից, եւ ամեն ուրբաթ «Քաղաք, սեր, կինո» խորագրով ֆիլմեր են ներկայցվում այգում:

Այս տարի նույնպես հայտարարված է գրախոսականների մրցույթ՝ հայկական նոր ֆիլմերի համար: Այս մրցույթի համար հատուկ բուհերում ցուցադրվում են վերջին տարիներին Հայաստանում արտադրված ֆիլմերը: Գրախոսականների ներկայացման վերջնաժամկետը հոկտեմբերի 25-ն է, իսկ կինոմրցույթինը՝ հոկտեմբերի 20-ը: Բոլոր աշխատանքները պետք է ներկայացվեն Հայաստանի ազգային կինոկենտրոն:

Հիշեցնենք, որ «Կինոաշունն» իրականացվում է արդեն չորրորդ անգամ՝ սկսած 2010թ.: Առաջին տարին ընդգրկվել էր միայն մայրաքաղաքն ու երեք մարզերը: Սակայն, երկրորդ տարվանից մասշտաբները մեծացան, ընդգրկելով նորերը:

«Կինոաշուն 2013» -ն անցկացվում է նախագահ Սերժ Սարգսյանի հովանու ներքո: Ծրագրին աջակցում են մշակույթի նախարարությունը եւ Երեւանի քաղաքապետարանը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## «Ֆրանսիական գրականության օրեր»՝ նվիրված Ժան-Պոլ Սարտրին

Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի եւ Փարիզ-Սորբոն 4 համալսարանի միջեւ համագործակցության շրջանակներում այսօր, հոկտեմբերի 4-ին՝ ժամը 10:00-ին, ԵՊԼՀ Մեծ դահլիճում տեղի կունենա «Ֆրանսիական գրականության օրեր»-ի հանդիսավոր բացումը, որին իրենց ողջույնի խոսքով հանդես կգան ԵՊԼՀ ռեկտոր, պրոֆեսոր Գ. Գասպարյանը եւ Փարիզ-Սորբոն 4 համալսարանից ժամանած հետեւյալ ներկայացուցիչները՝

1. Ժան-Միշել Գասպարյան՝ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան մշակութային հարցերով խորհրդական
2. Պասկալ Աքիեն՝ Փարիզ-Սորբոն համալսարանի գիտական խորհրդի փոխնախագահ
3. Բեռնար Ֆրանկո՝ Փարիզ-Սորբոն համալսարանի Համեմատական գրականության ամբիոնի վարիչ
4. Անի Կոհան-Սոլալ՝ Փարիզ-Սորբոն համալսարանի պրոֆեսոր

«Ֆրանսիական գրականության օրեր»-ի շրջանակներում հոկտեմբերի 5-ին՝ ժամը 10.00-ին, ԵՊԼՀ մեծ դահլիճում տեղի կունենա դասախոսություն՝ նվիրված Ժան-Պոլ Սարտրի վաղ շրջանի ստեղծագործություններին, իսկ ժամը 11.15-ին՝ ԵՊԼՀ ուսանողների ջանքերով կբեմադրվի Սարտրի «Ճանճերը» պիեսը:

*ԵՊԼՀ հանրային կապերի համակարգման բաժին*

## Վրիպակների ուղղում

«**Ազգի**» սեպտեմբերի 28-ի մշակութային հավելվածում տպագրված «Եթե մարդիկ չգնան Հայաստանից, իմ մեծագույն հաղթանակը կհամարեմ» Անահիտ Հովսեփյանի հրապարակման մեջ տեղ են գտել տեխնիկական վրիպակներ, ինչի համար հայցում ենք ընթերցողների ներողամտությունը: Կետադրականները՝ ստորակետ, վերջակետ, բութ, ավելի հաճախ՝ հարցման նշան, գրագետ ընթերցողը կարող է «վերականգնել»: «...այդպիսի ընդունելիություն» պետք է լինի՝ «ընդունելություն», «Դիլիջանի կոմպոզիտորների տունը պահածո կլինի Բրիտենի հիշատակը» պետք է լինի՝«պահածոյացրած կլինի Բրիտենի ներկայությունը», «Իզաբելա Ռազովա»-յի փոխարեն պետք է լինի «Արազովա», «Պատյանին Փարաջանովի ստեղծած գլխարկով տեսնելու փաստ է դարձել» պետք է լինի «տեսել ու փաստ է դարձել»:

# Վարդան Մինասյանը հրապարակեց ազգային հավաքականի կազմը



Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը հրապարակել է այն ֆուտբոլիստների ցանկը, որոնք կնախապատրաստվեն հոկտեմբերի 11-ին Բուլղարիայի եւ հոկտեմբերի 15-ին Իտալիայի հավաքականների հետ կայանալիք աշխարհի առաջնության ընտրական մրցախաղերին:

Հայաստանի հավաքականն աշխարհի առաջնության ընտրական վերջին հանդիպումների նախապատրաստությունը կսկսի հոկտեմբերի 7-ից՝ մարզումներն անցկացնելով Ավանի ֆուտբոլի ակադեմիայի խաղադաշտում:

Վնասվածքից ապաքինվելուց հետո կրկին հավաքական է հրավիրվել փորձառու պաշտպան Վալերի Ալեքսանյանը: Որոշ ընդմիջումից հետո հավաքականի կազմում ընդգրկվել է Էդգար Մալաքյանը, որը ներկայումս «Բանանցում» արդյունավետ խաղ է ցուցադրում: Հավաքի է հրավիրվել նաեւ ՀՀ առաջնության լավագույն ռմբարկուների ցուցակը գլխավորող Արտակ Դաշյանը:

Ինչպես հայտնի է, հոկտեմբերի 10-ին Հայաստանի երիտասարդական հավաքականը Երեւանում ընտրական մրցախաղում մրցելու է Ֆրանսիայի ընտրանու հետ: Այդ հանդիպումից հետո երիտասարդական հավաքականի մի քանի խաղացողներ կմիանան ազգային հավաքականին: Նշենք, որ որակազրկման պատճառով բուլղարացիների հետ հանդիպմանը չեն մասնակցի Վարազդատ Հարոյանն ու Արթուր Եդիգարյանը:

Հայաստանի հավաքականը հոկտեմբերի 14-ին կմեկնի Իտալիա, որտեղ հաջորդ օրը Նեապոլի «Սան Պաոլո» մարզադաշտում ընտրական վերջին հանդիպումը կանցկացնի իտալացիների հետ:

Ահա թե ովքեր են հրավիրվել ազգային հավաքականի ուսումնամարզական հավաքին:

Դարպասապահներ՝ Ռոման Բերեզովսկի («Դինամո» Մ., Ռուսաստան), Գեւորգ Կասպարով («Զոբ Ահան», Իրան), պաշտպաններ՝ Ռոբերտ Արզումանյան («Ակտոբե», Ղազախստան), Հրայր Մկոյան («Գանձասար»), Վալերի Ալեքսանյան («Ռահ Ահան», Իրան), Վարազդատ Հարոյան («Փյունիկ»), Կամո Հովհաննիսյան («Փյունիկ»), Լեւոն Հայրապետյան («Վիձեւ», Լեհաստան), Արթուր Ավագյան («Գանձասար»), կիսապաշտպաններ՝ Կառլեն Մկրտչյան («Անժի», Ռուսաստան), Արթուր Եդիգարյան («Կայրաթ», Ղազախստան), Հենրիխ Մխիթարյան («Բորուսիա», Դորտմունդ, Գերմանիա), Դավիթ Մանոյան («Փյունիկ»), Գեւորգ Ղազարյան («Շախտյոր», Կարագանդա, Ղազախստան), Մարկոս Պիզելի («Կրասնոդար», Ռուսաստան), Արաս Օզբիլիս («Սպարտակ», Մ., Ռուսաստան), Մասիս Ոսկանյան («Ռոսելար», Բելգիա), Էդգար Մալաքյան («Բանանց»), Արտակ Դաշյան («Գանձասար»), հարձակվողներ՝ Յուրա Մովսիսյան («Սպարտակ», Մ., Ռուսաստան), Արթուր Սարկիսով («Ուրալ», Ռուսաստան):

# «Ռեալն» արդյունավետության ռեկորդի հեղինակ



Չեմպիոնների լիգայի մրցաշարի 2-րդ տուրում 4-0 հաշվով ջախջախելով դանիական «Կոպենհագենին», Մադրիդի «Ռեալը» արդյունավետության նոր ռեկորդի հեղինակ դարձավ: Խմբային մրցաշարի մեկնարկային 2 խաղում «Ռեալը» 10 գոլ է խփել (առաջին տուրում արքայական ակումբը 6-1 հաշվով պարտության էր մատնել «Գալաթասարային»): Այդ գոլերից 5-ի հեղինակը Քրիստիանու Ռոնալդուն է, որը եվրոգավաթներում հոբելյանական՝ 100-րդ հանդիպումը նշեց «Կոպենհագենի» դարպասը խփած 2 գնդակով: Ռոնալդուն 5 գնդակով գլխավորում է չեմպիոնների լիգայի լավագույն ռմբարկուների ցանկը: 3-ական գոլ են խփել Մեսին եւ Կոստաս Միտրօղլուն («Օլիմպիակոս»):

«Ռեալը» 6 միավորով ամրապնդեց B խմբի առաջատարի իր դիրքը: 2 միավորով 2-րդ տեղում «Յուվենտուսն» է, որը սեփական հարկի տակ ոչ-ոքի՝ (2-2) խաղաց «Գալաթասարայի» հետ:

A խմբի առաջատարներ «Շախտյորի» եւ «Մանչեսթր Յունայթեդի» մրցավեճը Դոնեցկում ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1: Թիմերը 4-ական միավոր ունեն: 3 միավորով 3-րդ տեղում «Բայերն» է, որը 2-1 հաշվով հաղթեց «Ռեալ Սոսյեդադին»: Ընդ որում հաղթական գնդակը «Բայերը» խփեց ավելացված ժամանակում:

C խմբում 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց ՊՍԺ-ն՝ 3-0 հաշվով պարտության մատնելով «Բենֆիկային»: 2 գոլ խփեց Զլատան Իբրահիմովիչը: Մյուս խաղում նույնպիսի հաշվով «Օլիմպիակոսը» հյուրընկալվելիս հաղթեց «Անդերլեխտին» շնորհիվ Միտրօղլուի հեթ տրիկի:

Չեմպիոնների լիգայի ներկայիս գավաթակիր Մյունխենի «Բավարիան» Մանչեսթրում 3-1 հաշվով վստահ հաղթանակ տարավ «Մանչեսթր Սիթիի» նկատմամբ եւ 6 միավորով ամրապնդեց D խմբի առաջատարի դիրքը: Մոսկվայի ԲԿՄԱ-ն առաջին 3 միավորը վաստակեց՝ սեփական հարկի տակ 3-2 հաշվով պարտության մատնելով Պլզենի «Վիկտորիային»:

# Վարժությունը գրանցվեց Վահագն Ստեփանյանի անվամբ

**Անտվերպենում ընթացող սպորտային մարմնամարզության աշխարհի առաջնությունում Հարություն Մերդինյանին եւ Վահագն Ստեփանյանին չհաջողվեց նժույգաթափում մտնել եզրափակիչի 8 մասնակիցների շարքը՝ զբաղեցնելով համապատասխանաբար 9-րդ եւ 13-րդ հորիզոնականները: Չնայած դրան, Վահագն Ստեփանյանը նշանակալի հաջողություն արձանագրեց: Նա մրցավարներին հաջողությամբ ներկայացրել է իր մշակած նոր ծրագիրը՝ ուղիղ խաչաձեւումով կանգ ձեռքին, ապա հակադարձ խաչաձեւում: Մրցավարները բարձր են գնահատել երեւանցի մարմնամարզիկի նորամուծությունը եւ այն գրանցվել է մարմնամարզական բարդ տարրերի ու կապակցությունների միջազգային անվանակարգում՝ ստանալով «Ստեփանյան» անվանումը:**

## ՇԱԽՄԱՏ

# 3 հայ շախմատիստներ գլխավորում են աղյուսակը

**Չեռնոգորիայի Բուդվա քաղաքում ընթացող շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնության 4-րդ տուրում մինչեւ 10 տարեկանների մրցաշարի առաջատարներից մեկը՝ Արմեն Բարսեղյանը 4-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Իվան Շիցկոյի նկատմամբ: Իսկ Հակոբ Հակոբյանն առաջին կես միավորը կորցրեց՝ ոչ-ոքի խաղալով Ալբերտ Թոմասիի հետ:**

**Արմեն Բարսեղյանը 4 միավորով գլխավորեց մինչեւ 16 տարեկան տղաների մրցաշարի աղյուսակը: 8 շախմատիստներ, որոնց թվում է նաեւ Հակոբ Հակոբյանը, 3,5-ական միավորով հետապնդում են առաջատարին:**

**Իր հաջող ելույթները շարունակեց նաեւ մինչեւ 16 տարեկանների մրցաշարում հանդես եկող Տիգրան Հարությունյանը: Հաղթելով Թուրքիան ներկայացնող միջազգային վարպետ Վահապ Սանալին, Տիգրանը 4 միավորով ստանձնեց միանձնյա առաջատարի դերը: 5 շախմատիստներ նրան զիջում են կես միավորով: Տարիքային այս խմբում հանդես եկող Մանուել Պետրոսյանն ու Կարեն Հովհաննիսյանը վաստակել են 2-ական միավոր:**

**Հաղթարշավը շարունակեց նաեւ Հովհաննես Գաբուզյանը՝ 4-րդ անընդմեջ հաղթանակը տոնելով իր հայրենակից Արման Միքայելյանի հետ մրցավեճում, որը մինչ այդ շահել էր բոլոր 3 պարտիաները: Գաբուզյանը Վլադիմիր Ֆեդոսեեւի եւ Դավիթ Պարդոյի հետ 4-ական միավորով առաջատարներն են: Մինչեւ 18 տարեկանների մրցաշարում հանդես եկող Կարեն Գրիգորյանը վաստակել է 3 միավոր: Նա ոչ-ոքի խաղաց Մաքսիմ Լուգովսկոյի հետ:**

**Հայ շախմատիստուհիներից առավել հաջող ելույթ է ունենում Մանե Ադամյանը: Մինչեւ 12 տարեկան աղջիկների մրցաշարում Մանեն 3,5 միավորով 4-րդ տեղում է եւ ընդամենը կես միավոր է զիջում աղյուսակը գլխավորող Գաբրիելա Անտովային, Աննամարի Մարյանովիչին եւ Պոլինա Շուվալովային: Մանեն 4-րդ տուրում հաղթեց Յանա Շնեյդերին:**

**Մինչեւ 16 տարեկանների մրցաշարում Անի Հարությունյանը 3 միավորով 6-րդ տեղում է: Նա հաշտություն կնքեց Եվա Հարազինսկայի հետ: Մանեն մեկ միավոր է զիջում աղյուսակը գլխավորող Աննա Ստյաժկինային:**

# Մկրտչյանը հաշտություն կնքեց

**Վրոցլավում ընթացող շախմատի մրցաշարի 5-րդ տուրում Լիլիթ Մկրտչյանը հաշտություն կնքեց Սոֆիկո Գուրամիշվիլու հետ: Լիլիթը 2,5 միավորով 7-րդ տեղում է: 3,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են Նինո Բացիաշվիլին եւ Յոաննա Մայդան-Գաեւսկան: Բացիաշվիլին պարտվեց Կարինա Ժզերկովսկա-Խոռովսկային, իսկ Մայդան- Գաեւսկան հաղթեց Մոնիկա Սոչկոյին:**

# Մովսիսյանն ու Օզբիլիսը լավագույնների ցանկում են

**RBK-Sport-ը կազմել է ՌԴ առաջնության 11 տուրերի արդյունքներով ամենադիտարժան խաղ ցուցադրող ֆուտբոլիստների ցանկը: Մոսկվայի «Սպարտակի» եւ ՀՀ հավաքականի հարձակվող Յուրա Մովսիսյանը 6 միավորով զբաղեցրել է 4-րդ տեղը, իսկ Արաս Օզբիլիսը 5 միավորով եզրափակել է լավագույն հնգյակը: Ցուցակը գլխավորում է «Զենիթի» բրազիլացի հարձակվող Հալկը:**

**«Զենիթի» դարպասը Մովսիսյանի խփած գոլը հայտնվել է 11-րդ տուրի լավագույն գոլերի հնգյակում: Իսկ տուրի լավագույն գոլ է ճանաչվել Հալկի խփած գնդակը:**

# Ռայան Գիգզը գերազանցեց Ռաուլի ռեկորդը



**«Մանչեսթր Յունայթեդի» կիսապաշտպան Ռայան Գիգզը մասնակցելով Դոնեցկի «Շախտյորի» հետ հանդիպմանը, չեմպիոնների լիգայի մրցաշարերում 145-րդ խաղն անցկացրեց: Նա գերազանցեց Մադրիդի «Ռեալի» նախկին հարձակվող Ռաուլի ռեկորդային ցուցանիշը, որը 144 խաղի մասնակից էր:**

**Ռայան Գիգզը 23-րդ մրցաշրջանն է անցկացնում «Մանչեսթր Յունայթեդի» կազմում: 39-ամյա ֆուտբոլիստն իր առաջին պրոֆեսիոնալ պայմանագիրը կնքել է 1990-ին, իսկ հաջորդ տարվա մարտին նորամուտն է նշել «Մանչեսթր Յունայթեդում», որի կազմում պաշտոնական մրցումներում 1000-ից ավելի խաղ է անցկացրել: Նա Անգլիայի պրեմիեր լիգայի ֆուտբոլիստներից ամենատիտղոսակիրն է: Գիգզը 12 անգամ նվաճել է Անգլիայի չեմպիոնի տիտղոսը, 4 անգամ դարձել է երկրի գավաթակիր, 2 անգամ հաղթող է ճանաչվել չեմպիոնների լիգայի մրցաշարում, Անգլիայի լիգայի գավաթի եւ Եվրոպայի Սուպերգավաթի խաղարկություններում: Նա մինչեւ 2014-ի ամառը գործող պայմանագիր ունի հարազատ ակումբի հետ:**

**Չեմպիոնների լիգայում Գիգզը նորամուտը նշել է 1993-ի սեպտեմբերին: Գիգզի ռեկորդին կարող է սպառնալ «Բարսելոնի» կիսապաշտպան Խավին, որը չեմպիոնների լիգայում 139 խաղ է անցկացրել: Լեգենդար իտալացի ֆուտբոլիստ Պաոլո Մալդինին 140 խաղով 3-րդ արդյունքն ունի: Կլարենս Զեեդորֆը մասնակցել է 131 հանդիպման, իսկ «Ռեալի» դարպասապահ Իկեր Կասիլյասը նույնպիսի արդյունքով զբաղեցնում է 6-րդ տեղը:**

**Եթե հաշվի առնենք միայն չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարից սկսած հանդիպումների քանակը, ապա այդ ցուցանիշով ռեկորդակիրը Ռաուլն է՝ 142 խաղ: Ռայան Գիգզը մասնակցել է 139 խաղի եւ կարող է գերազանցել նաեւ այդ ռեկորդը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## ԼՈՒՐԵՐ

# Այսօրվանից եղանակը կցրտի

**Հանրապետությունում այսօր ցերեկվա ժամերին սպասվում են անձրեւներ, որոշ տեղերում դրանք կուղեկցվեն քամու ուժգնացմամբ՝ մինչեւ 20-25 մ/վրկ:**

**Ցերեկային ժամերին նաեւ կտրուկ կնվազի ջերմաստիճանը, եւ ցածր ջերմաստիճանը կպահպանվի առնվազն մինչեւ հաջորդ շաբաթվա սկիզբը:**

**Ըստ «Հայպետհիդրոմետի»՝ Երեւանում նույնպես այսօր գիշերվանից սպասվում են անձրեւ եւ ամպրոպ, որոնք կուղեկցվեն քամու ուժգնացմամբ՝ մինչեւ 15-20մ/վրկ, իսկ օդի ջերմաստիճանը ցերեկը կլինի +18+20:**

# Կրկնակի ավելի ընդգրկված ինտերնետ՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի «Անձնական» սակագնային պլանի բաժանորդների համար

**Ս.թ. հոկտեմբերի 1-ից ՎիվաՍել-ՄՏՍ-ի «Անձնական» հետվճարային սակագնային պլանով տրամադրվող ընդգրկված ինտերնետի ծավալը միեւնույն ամսավճարի դիմաց կազմում է 1000 ՄԲ՝ նախկին 500 ՄԲ փոխարեն:**

**Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.mts.am կայքից կամ pda.mts.am բջջային կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալ ցանկացողների համար:

Դասընթացները կկազմակերպվեն Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Վերապատրաստման դասընթացներին կարող է մասնակցել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

Վերապատրաստմանը մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

1) դիմում՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի անունով (ձեւ 1, լրացվում է տեղում).
2) 3x4 չափի 2 լուսանկար.
3) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը 2 օրինակ.
4) աշխատանքային գրքույկի պատճենը կամ քաղվածքը 2 օրինակ.
5) անձնագրի պատճենը 2 օրինակ.
6) մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր (գիտական աշխատություններ, հրապարակումներ կամ դրանց ցանկը) 2 օրինակ.
7) «Անելիք բանկ» ՓԲԸ-ում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 11800033791500 հաշվեհամարին փոխանցված գումարի անդորրագիրը:

Փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակի հետ միասին: Պատճենների իսկությունը ստուգելուց հետո բնօրինակները վերադարձվում են:

Դասընթացի տեւողությունը 15 օր է՝ 90 ժամյա տեւողությամբ: Վերապատրաստման դասընթացի արժեքը 55.000 ՀՀ դրամ է՝ առանց ճաշի եւ սուրճի ընդմիջման:

Դասընթացները կվարեն ոլորտների վերապատրաստման մեծ փորձ ունեցող մասնագետները:

Դիմումներն ընդունվում են ս.թ. սեպտեմբերի 30-ից մինչեւ հոկտեմբերի 25-ը:

Դասընթացները սկսվելու են հոկտեմբերի 28-ից եւ ավարտվելու են նոյեմբերի 11-ին (ներառյալ շաբաթ եւ կիրակի օրերը):

Երեւան, Տիգրան Մեծի 17, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, 2-րդ հարկ, 202, 203 սենյակներ, ամեն օր՝ ժամը 900-ից 1630-ն: Հարցերի դեպքում զանգահարել՝ 010-59-70-29, կամ գրել հետեւյալ էլ. փոստով՝ intercoop85@mail.ru

## ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Համալսարանի **գիտական թանգարանի** ավագ գիտաշխատողի տեղի համար հետեւյալ գործառույթներով եւ հմտություններով.

▼ պետք է ունենա առնվազն բարձրագույն կրթության մագիստրոսի (դիպլոմավորված մասնագետի) կրթական աստիճան /"թանգարանագետ" մասնագիտությամբ/

▼ Գերազանց տիրապետել համակարգչային գիտելիքներին եւ առնվազն մեկ օտար լեզվի

▼ Հաղորդակցության կարողություններ

Հավակնորդները անձնակազմի հաշվառման բաժին են ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

◆ Դիմում ռեկտորի անունով
◆ Ինքնակենսագրություն
◆ Կրթությունը հավաստող փաստաթղթերի պատճենները
◆ Անձնագրի պատճենը
◆ Լուսանկար 1 հատ
◆ Աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/:

*Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ մինչեւ ս.թ. հոկտեմբերի 11-ը:*

*Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել անձնակազմի հաշվառման բաժին*

հասցեն՝ ք. Երեւան, Տիգրան Մեծի 17, 200 սենյակ,
հեռ՝ 59-70-84:

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է** չեխական «Կարմա»
գազի վառարան
Հեռ.՝ 094-48-68-03

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուրջյան 15/19 | կաթսայատուն | 5,992.14 | 703.01 | 94,800,000 |
| 2 | Շեւչենկոյի փ. 34/3 | կաթսայատուն | 526.73 | 326.07 | 17,250,000 |
| 3 | Խաղաղ Դոնի փող. 27/4 | կաթսայատուն | 307.44 | 342.50 | 17,700,000 |
| 4 | Ն.Շենգավիթ 9փ., 2/3 | կաթսայատուն | 316.18 | 286.76 | 6,100,000 |
| 5 | Տիտոգրադյան փող. 1/9 | կաթսայատուն | 161.00 | 161.00 | 9,350,000 |
| 6 | Գաջեգործների փող. 74/2 | կաթսայատուն | 125.05 | 125.05 | 3,800,000 |
| 7 | Արցախի փողոց 8/13 | կաթսայատուն | 439.06 | 439.06 | 25,500,000 |
| 8 | Էրեբունի 1 | կաթսայատուն | 240.72 | 240.72 | 10,800,000 |
| 9 | Էրեբունի փողոց 29/1 | կաթսայատուն | 262.30 | 262.30 | 7,350,000 |
| 10 | Շահվերդյան 18, ԿԶՀ 31 | կաթսայատուն | 254.27 | 236.60 | 16,350,000 |
| 11 | Շիրակի 2 նրբ., 4/1 | կաթսայատուն | 206.00 | 152.87 | 6,150,000 |
| 12 | Իսակովի պող., 52/27 | կաթսայատուն | 158.76 | 158.76 | 6,850,000 |
| 13 | Գ. Մահարու 39/9 | կաթսայատուն | 328.00 | 328.00 | 9,050,000 |
| 14 | Թեյշեբանի 1 շենք | Կաթսայատուն | 21035 | 753.1 | 401,760,000 |
| 15 | Նոր Նորք 8-րդ մ/շ Մինսկի փողոց 5/8 ՇԶԿ | Կաթսայատուն | 24671.48 | 3166.7 | 609,550,000 |
| 16 | Ծերենցի փողոց 3/3 | կաթսայատուն | 158.76 | 141.36 | 9,400,000 |
| 17 | Բագրատունյաց 49 | կաթսայատուն | 237.46 | 209.56 | 21,300,000 |
| 18 | Բաղրամյան 1 փակ. 14 շենք հ.163 տարածք | ոչ բնակելի տարածք | | 42.00 | 13,950,000 |
| 19 | Ն.Չարբախ 3-րդ փողոց 58/4 | շինություն | 41.65 | 33.07 | 2,250,000 |
| 20 | Անդրանիկի 10/1 շենք թիվ 57 | ոչ բնակելի տարածք | | 154.50 | 10,500,000 |
| 21 | Վարդանանց փողոց հ.11 | ոչ բնակելի տարածք | | 75.5 | 9,200,000 |
| 22 | Սիլիկյան թաղ. 10 փողոց 44 շին | շինություն | 1058.71 | 271.31 | 15,600,000 |
| 23 | Իսակովի 50/16 | կաթսայատուն | 101.76 | 84.56 | 4,450,000 |
| 24 | Լեփսիուսի 6փող. 37շ. 46շին | ոչ բնակելի տարածք | | 39.3 | 4,250,000 |
| 25 | Թումանյան 11 շենք 72 շին | ոչ բնակելի տարածք | | 10.3 | 1,000,000 |
| 26 | Աբովյան փողոց 62 շենք հ.31 | ոչ բնակելի տարածք | | 40.95 | 10,550,000 |
| 27 | Բագրատունյաց 22/6 | Կաթսայատուն | 284.82 | 252.84 | 16,700,000 |
| 28 | Շեւչենկոյի 4/4 | Կաթսայատուն | 150 | 131.04 | 5,600,000 |
| 29 | Անդրանիկի 122/1 | Կաթսայատուն | 384.75 | 281.75 | 20,070,000 |
| 30 | Սուրենյանց փողոց Մեղիկ 2 | Կաթսայատուն | 352.2 | 262.7 | 18,500,000 |
| 31 | Նորք Մարաշ 9-րդ փողոց 121/1 | Կաթսայատուն | 105.6 | 89.6 | 6,350,000 |
| 32 | Մայիսի 9 փողոց 13/3 | կաթսայատուն | 148.75 | 139.15 | 6,950,000 |
| 33 | Սասունցի Դավիթ 13 | կաթսայատուն | 122.7 | 104.46 | 8,500,000 |
| 34 | Չարենցի 76/6 | կաթսայատուն | 54.82 | 42.04 | 8,600,000 |
| 35 | Քաջազնունու 11 շենք 111 | ոչ բնակելի տարածք | | 350.8 | 14,170,000 |
| 36 | Դավթաշեն ՇԶԿ հ. 3 | Կաթսայատուն | 20,891.14 | 2,402.60 | 139,300,000 |
| 37 | Չարենցի փողոց թիվ 76/5 | կաթսայատուն | 2,251.36 | 1,244.00 | 363,900,000 |
| 38 | Լենինգրադյան փողոց 38/4 | Կաթսայատուն | 219.15 | 161 | 9,495,000 |
| 39 | Արտաշիսյան 3 նրբ 26/3 | Կաթսայատուն | 168.32 | 143.37 | 3,420,000 |
| 40 | Արտաշիսյան 60/3 | Կաթսայատուն | 220 | 193.29 | 3,780,000 |
| 41 | Գուլակյան 16բ | Կաթսայատուն | 203 | 203 | 12,420,000 |
| 42 | Անդրանիկի փ. 40/3 | Կաթսայատուն | 337.28 | 287.92 | 19,350,000 |
| 43 | Էրեբունի 14/4 | Կաթսայատուն | 170.18 | 145.68 | 8,838,000 |
| 44 | Շիրակի փ.6/10 | Կաթսայատուն | 309.50 | 207.98 | 12,798,000 |
| 45 | Ա.Սարգսյան 5/2 | Կաթսայատուն | 127.40 | 99.18 | 5,400,000 |
| 46 | Շիրազի 42/5 | Կաթսայատուն | 239.71 | 129.96 | 7,380,000 |
| 47 | Հալաբյան 41/3 | Կաթսայատուն | 257.12 | 161.46 | 9,090,000 |
| 48 | Մալխասյանց 23/6 | Կաթսայատուն | 169.00 | 144.00 | 8,640,000 |
| 49 | Սեւակի 7/6 | Կաթսայատուն | 190.29 | 139.20 | 10,260,000 |
| 50 | Սմբատ Զորավարի 42/3 | Կաթսայատուն | 262.26 | 217.11 | 11,385,000 |
| 51 | Ֆուրմանովի 1/1 | Կաթսայատուն | 295.85 | 278.97 | 14,940,000 |
| 52 | Զեյթուն 3 թաղ. Լեփսիուսի փող. 37/6 | Կաթսայատուն | 194.78 | 163.74 | 9,000,000 |
| 53 | Արշակունյաց պող. 32/4 | Կաթսայատուն | 138.17 | 101.13 | 9,810,000 |
| 54 | Հ.Էմինի 80/2 | Կաթսայատուն | 214.46 | 180.31 | 10,935,000 |
| 55 | Մամիկոնյանց 41 շենք 6 բնակարան | բնակարան | | 122.50 | 30,690,000 |
| 56 | Մամիկոնյանց 41 շենք 10 բնակարան | բնակարան | | 69.80 | 17,910,000 |
| 57 | Գ-3 թաղամաս հ.41 | անավարտ շինություն | 1,021.93 | 1,919.98 | 37,440,000 |
| 58 | Նուբարաշեն 2ա շենք 26 շինություն | ոչ բնակելի տարածք | | 118.51 | 10,143,000 |
| 59 | Արտաշիսյան պ., 3 նրբ. 26/2 | Կաթսայատուն | 141.75 | 117.06 | 3,033,000 |
| 60 | Շերամի 23/4 | Կաթսայատուն | 318.72 | 292.82 | 14,310,000 |
| 61 | Հ Հակոբյան 1/7 | Կաթսայատուն | 108.80 | 108.80 | 18,000,000 |
| 62 | Այասի փողոց թիվ 1/3 | Կաթսայատուն | 414.50 | 305.70 | 19,800,000 |
| 63 | Բաղրամյան 2 փակուղի 10/1 | Կաթսայատուն | 148.85 | 125.44 | 16,200,000 |
| 64 | Մամիկոնյանց փող. 56/9 | Կաթսայատուն | 218.24 | 260.50 | 31,545,000 |
| 65 | Դավթաշեն 4 թաղ. ԿԶՀ 2 | Կաթսայատուն | 247.00 | 216.00 | 16,290,000 |
| 66 | Դավթաշեն 4 թաղ. ԿԶՀ 3 | Կաթսայատուն | 265.50 | 212.30 | 18,000,000 |
| 67 | Հալաբյան 27շ. 75 տարածք | ոչ բնակելի տարածք | | 56.70 | 2,970,000 |
| 68 | Պուշկինի 44 | ոչ բնակելի տարածք | | 16.80 | 1,980,000 |
| 69 | Մաշտոցի 20 | ոչ բնակելի տարածք | | 37.80 | 5,670,000 |
| 70 | Զաքյան փողոց 1շենք 38 տարածք | ոչ բնակելի տարածք | | 58.10 | 6,660,000 |
| 71 | Կաթսայատուն Նոր Արեշ 1/25 | կաթսայատուն | 195.50 | 195.50 | 7,470,000 |
| 72 | Խաղաղ Դոնի փող. 7/8 | կաթսայատուն | 312.78 | 348.10 | 18,270,000 |
| 73 | Աթոյան փողոց անցուղի 18/3 | կաթսայատուն | 441.95 | 441.95 | 15,840,000 |
| 74 | Ռուբինյանց փողոց թիվ 24/1 | կաթսայատուն | 158.72 | 158.72 | 8,865,000 |
| 75 | Սեբաստիա 18/2 | կաթսայատուն | 194.83 | 173.00 | 7,830,000 |
| 76 | Վիլնյուսի փող.,67/2 | կաթսայատուն | 242.50 | 212.75 | 6,030,000 |
| 77 | Կուրղինյան 5/3 | կաթսայատուն | 162.97 | 135.50 | 6,750,000 |
| 78 | Սաֆարյան 16/4 կաթսայատուն | կաթսայատուն | 306.25 | 288.00 | 11,160,000 |
| 79 | Մոլդովական փողոց 50/9 | կաթսայատուն | 192.66 | 163.10 | 7,965,000 |
| 80 | Հ/Ա Բ-2 թաղ. 92 շենքի հ.20 | ոչ բնակելի տարածք | | 58.70 | 4,860,000 |
| 81 | Բաղրամյան 30 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 89.70 | 12,690,000 |
| 82 | Նալբանդյան 50 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 14.00 | 1,530,000 |
| 83 | Մամիկոնյանց 1/3 | կաթսայատուն | 307.20 | 280.90 | 21,510,000 |
| 84 | Դավթաշեն 2 թաղ. ԿԶՀ 1 | կաթսայատուն | 237.12 | 206.60 | 11,340,000 |
| 85 | Չեխովի 48/4 | կաթսայատուն | 160.25 | 131.30 | 11,475,000 |
| 86 | Հանրապետության 62 շենք 17 ավտոտնակ | ոչ բնակելի տարածք | | 29.88 | 3,900,000 |
| 87 | Բաղրամյան 2 շենք 98 տարածք | ոչ բնակելի տարածք | | 30.80 | 3,700,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ հոկտեմբերի 21-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ հոկտեմբերի 21-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 3.10.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: